

# ԲԱՐՁՐԱՅԻՆ

ՕՐԱԿԱՐ

ԸՆԴՀԱՅԻ, ՏԵՍԵՍԻԱԿԻ ԵՒ ԲՈՒԺՈՒՐԻԱԿԻ

ԳԻՏԵԼԵՐԸ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 5.

1845

ՄԱՐՏԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Այս կամ Օ որդիական :

ԱԵՆԴԱՆԱԿԱՄԱՐԸ (որուն յունարէն բառով՝ Օ որդիակառ ալ կ'ըսենք) կենդանիներու գոտի ըսել է . ինչու որ ըստ աստղաբաշխից կամ աշխարհագրաց կը սեպուի , թէ արել կամ թէ երկիրս երկնքին երեսը պտըտած ատենը՝ միշտ 16 աստիճան՝ լայն միջոցի մը մէջտեղը կը պտըտի , որ ծիրխաւարման ալ կ'ըսուի . իսկ մէկաւ մոլորակները կենդանակամարին բոլոր լայնութեանը մէջ կը քալեն՝ որը շատ որը քիչ խոտորելով :

Այս կամարը 12 հաւասար կտոր կը բաժնուի , ամէն մէկը 30 աստիճան . ան կտորները իբր թէ մէյմէկ ամսական ձամբաներ են որ երկիրս երկնքին մէջ կ'ընէ . 12 անգամ 30դ կ'ընէ 360 , և աս է աշխարհագրաց ըսած 360 աստիճանները , որով երկրիս բոլորտիքը կը քածնեն . և արել կամ երկրիս օրը գրեթէ մէկ աստիճան մը քալելով՝ կըլայ տարին զրեթէ 365 օր 5 ժամ 49 վայրկեան :

Այս առ 12 մասերը կ'ըսուին խորանք արեւու կամ աստեղատուն . և

իրաւցինէ աստղեր կամ համաստեղութիւններ՝ կան հօն տեղուանկը , որ բոլորը մէկէն 1144 աստղ է . և ահա ան աստղերուն շատին մէյմէկ կենդանւոյ անուն դրած ըլլալուն համար՝ ան գոտին ըսուել է կենդանակամար :

Այնդանեաց անուններ զրուելուն պատճառը մէյմը աս է , որ ան համաստեղութիւնները քանի մը աստղէ ձեացած՝ վեր 'ի վերանց մէկ կենդանւոյ մը նմանութիւն կը բերեն . ինչպէս երբեմն ամսկերուն մէջ ալ կը տեսնէնք ասանկ նմանութիւններ . մէյմըն ալ՝ որ մեր նախնիք աստղաբաշխ և հովիւ ու երկրագործ ըլլալով , ինչպէս որ երկնքին աստղերը իրենց տոմարի տեղ կը բանեցինեին , ասանկ ալ իրենց հովուական ապրանքը երկնքին երեսը կը տեսնէին մտքով : Այս մըն ալ զանազան առասպելներու կամ երեւել բաներու յիշատակի համար զրուած են ան անունները . որուն վրայ վերջը զատ խօսինք :

Այս կենդանակամարը և իր բաժանմունքները կ'երենայ թէ հին նահա-

1 Մէկ աստիճանին երկայնքն է 25 փարսախ :

1 Տես Բ. Հատոր , երես 18 :

պետներն ըրին . վասն զի ամէն հին  
ազգաց մէջ կը գտնուի զոդիակոսը ,  
Հնդկաց , Վաղդէացւոց և աւելի Եր-  
գիպտացւոց մէջ . շատ հռչակաւոր է  
ան կենդանակամարը որ Տէնտէրահ  
անունով Երկիպտոսի գեղի մը հին տա-  
ճարին մէջ գտնուեր ու աս դարուս  
սկիզբները Փարիզքերուեր է :

Երկնագունտերու վրայ կենդանա-  
կամարը կը քաշեն հասարակած ը-  
սուած լայն շրջանակի մը վրայ՝ քովլու-  
տի անցած , որով երկու կը քաժնուի  
ինքն ալ իրեն կենդանակերպներն  
ալ : Խուններն են ,

1 Խոյ	7 Կշխ
2 Ցուլ	8 Կարիճ
3 Երկաւոր	9 Աղեղնաւոր
4 Խեցգետին	10 Այծեղիւր
5 Առիւծ	11 Ջրհոս
6 Կոյս	12 Զուկն :

Երկիպտացիք որ հին ատեն առաջին  
ծաղկած ազգը կը սեպուեին՝ աս ա-  
նունները հնարերեն , կմուրիշներուն  
հնարածը պահեր են . Քոյնք ալ որ ա-  
մէն բան Երկիպտոսէ կը սորվէին՝ ան  
կէ առին աս ալ , թէպէտ և քիչ մը-  
փոխեցին : Ուէ Երկիպտացիք և թէ  
Քոյնք աս կենդանիներէն զատ՝ մշյ-  
մէկ չաստուծոյ անուն ալ կուտային  
անոնց . այսպէս

Բ.մ. ԵԳԻՊ. .	Բ.մ. Ց.Ա.Ն.Ա. .	Բ.մ. Հ.Ա.Յ. .
1 Արամազգ Ամենն	.	Ամենասկամ
2 Ապիս	.	Պալլաս
3 Ովոս և Հար- պոկրատէս	Կաստով և Պողիկետիս	Ասողիկ
4 Անուբիս	Հերմէս	Հերմէս
5 Ռուբիս	.	Արամազգ
6 Խախ	Դեմետէ	Դեմետէ
7 .	.	Հեփեստոս
8 Տրիփոն	Արէս	Արէս
9 Հերակլէս	Հերակլէս	Անահիտ կամ Արտէմիս
10 ՄԵՆԴԵ	Պան	Հուկա
11 Կանովզոս	.	Հերա
12 Կեփտի	Ասողիկ	Պոսիդոն

Երբոր հովուական կեանքը դադրե-  
ցաւ , աստեղաց վրայ եղած գիտու-  
թիւնն ալ ուսմունք մը եղաւ , և քի-

չերուն քով մնաց . անոնք ալ ձշմար-  
տութեան հետ սուտն ալխառնեցին ,  
ու աստղերու նայելով ծուռ մարգա-  
րէութիւններ կ'ընէին , մանաւանդ  
աս 12 համաստեղութեանց վրայ . դր  
կ'ընէին՝ թէ արևը առիւծ աստեղա-  
տան մէջ եղած ատենը ով որ ծնանի ,  
կամ թէ առիւծին տակ ծնողը՝ թա-  
գաւոր կամ կտրիչ կ'ըլլայ . կարձին  
տակ ծնողը՝ չարածձի կ'ըլլայ . կշուխն  
տակ ծնողը արդար կ'ըլլայ . խոյին  
տակ՝ հարուստ և այլն . աս մոլորու-  
թիւնները կամաց կամաց հաւատքի  
պէս եղան , որ ախտարք , սաբէութի  
քաւգէութի կ'ըլլայ : Առւրբ հարը  
ասոնց գէմշատ խելացի բաներ գրեր  
են , ինչպէս մեր Եղնիկ վարդապետը  
երրորդ գըքին մէջ , և սուրբն Բար-  
սեղ՝ վեցօրեայ Ճառերուն մէջ : Ի՞-  
ծուռ վարդապետութիւնները գեռ  
կը գտնուին Խցիոյ հին ազգերուն քով-  
քայց ամէն ազգի մէջ ալ աստղահմայ-  
ութեան շոշորդ մը կայ :

Խակ կենդանակերպները 4000 տա-  
րիէն ՚ի վեր օրացոյցներու մէջ ամսոց  
նշաններ եղած են , և իրեք իրեքը  
մէկտեղ՝ տարւոյն չորս եղանակները  
կ'որոշեն , այսպէս .

Գ.Ա.Յ.Ա.Յ.Բ. .

Խոյ .	Ցուլ .	Երկաւոր .
Մարտ ,	Ապրիլ ,	Մայիս .
		Ա.Յ.Ա.Յ.Բ. .
Խեցգետին ,	Առիւծ ,	Կոյս .
Ցունիս ,	Ցուլիս ,	Օդոսառու .
		Ա.Յ.Ա.Յ.Բ. .
Կշխ ,	Կարիճ ,	Աղեղնաւոր .
Սեպտեմբեր ,	Հոկտեմբեր ,	Կոյսեմբեր .
		Զերտայն .
10 Այծեղիւր ,	Ջրհոս ,	Զուկն .
Դեկտեմբեր ,	Ցունուար ,	Փետրուար :

Վարտէն կը սկսին , վասն զի մար-  
տը տարւոյն գեղեցիկ օրերուն գուռն  
է . աս ամսուս 21ն ըստ նոր տոմարի՝  
արևը կը մտնէ խոյ աստեղատունը ,  
և ան օրը գիշերահաւասար կամ հա-  
սարակած կ'ըլլայ , որ ըսել է գիշերը

և ցորեկը հաւասար 12 ժամ. և աս կ'ըսուի Դարնանային գիշերահաւասար. որովհետեւ նոյն օրը գարնանամուտ է. անկէ ինչուան որ յունիսի 21<sup>ին</sup> խեցգետին մտնէ՝ օրերը աւելի կ'երկըննան : Հունիսի 21<sup>ին</sup> ամառնամուտ է, և արել ալ կը սկըսի վար իջնալ, որով օրերը կը կարձըննան : Անպատեմբերի 22<sup>ին</sup> կը մտնէ կշիռ աստեղատունը, և երկրորդ անգամ գիշերահաւասար կ'ըլլայ, որ Աշնանային կ'ըսուի, որովհետեւ ան օրը աշուն կը մտնենք : Ինկէ վերջը կը շարունակուի օրերուն կարձըննալը ինչուան գեկտեմբերի 21, որ արել այծեղիւր կը մտնէ, և ձմերային արեադարձ կ'ըլլայ . ըսելէ թէ ան օրը ձմեռ կը մըտնենք, արել կը սկըսի բարձրանալ, օրերն ալ կամաց կամաց կ'երկըննան :

Իս համառօտ տեղեկութիւնը տալէն ետեւ՝ կը մնայ որ յաջորդ թերթին մէջ առանձին խօսինք ամէն մէկ կենդանակերպներուն նշանակութեր վրայ . իրաւ որ անոնք բոլոր առասպելեալ ու շնծու պատմութիւններ են, և մեր սրբազան կրօնքին ծանրութեանը չեն վայլեր . բայց քանի որ աս նշանները մեր օրացոյցներուն մէջ կը դորձածենք՝ անոնց նշանակութիւնը դիտնալն ալ ամօթ չէ :

## ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ձ:

Աթէ գու ագուցեր ձիոյ զօրութիւն, և զեցուցեր զնդ պարանոցաւ նորա . արկեր զնովաս սպառագինութիւն, և փառս լանջաց նորա զանդըգնութիւն : Որոսայ ՚ի գաշտի և գափր հատանէ . ելանէ ՚ի գաշտ զօրութեամբ . ՚ի պատահելնեափց արհամարհէ, և ոչ գարձցի յերկաթոյ : Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, և շարժիւն վահանի և նիզուկի . և բարկութեամբ ապականէ զերկիր . և ոչ հաւասայ մինչև փող հարկանիցի . և իբրև փող հարկանի, նա վաշ վաշ կարգայ . ՚ի հեռաստանէ առնու զնոտ պատերազմի, վազս առնլով և փողելով :

ՅՈՎ.Բ

Որպէս նըժոյդ յազթող մարտից ամենի ՚ի գըժուարին զարդուե զնուցն ամայի . Մեղկ տանուտն հանդոյն ՚ի զեղծ հանդըսական Անսանձ ըզթափ առնու ՚ի վտառս ՚ի գարման, Ըզմայն փողոյ թէ լըսիցէ յեղակարծ, Կամ թէ շողալ տեսցէ ըզայը սուսերաց . Անդր առ ժամայն խըսրանցելով կայ յառի, Հուր տենչանացն ՚ի ռազմի լանջուն վառի Քաջամարտիկ տանել ՚ի նուս վերելեակ, Դըղնդելով գոռալ ՚ի խոսն գըժընդակ, Այսպէս զարթեաւ յանկարծ ընդուստ պարմանին Այն ինչ հարան յաջորդն նըշոյթ պողպատին :

ԹԱՍՍՈՑ

ՈՒԱՐԴՈՒՄ շատ մեծ պարծանք է որ կրցեր է աս խրոխտ ու սրտոտ կենդանին նուածել ու իր կամացը հնազանդեցընել . անանկ որ պատերազմի մէջ իրեն թէ քաշած վտանգներուն և թէ փառաւառոր յաջթութիւններուն անիկայ ալ մասնակից կ'ըլլայ . իր տիրոջը պէս ինքն ալ անվախ է . կը տեսնէ վտանգները ու համարձակ մէջը կը մտնէ . զէնքի ձայններուն կը վարժի, մանաւանդ թէ ան ձայններով շատ ալ կը զուարձանայ . որսի ատեն, հանդէսներու, ձիընթացներու մէջ կրակ կը ցատքէ աչուըներէն : Որչափ որ հլուէ մարդուս, այնչափ ալ սրտոտ է . բայց կիրք ելած ատենն ալ չափը չանցըներ, ինքը զինքը ուղած ատենը կը բռնէ . զինքը կառավարողին ոչ միայն կը հնազանդի, հապա կարծես թէ անոր ակնարկութենէն կը հասկընայ ու կամքը կը կատարէ . յարձըկիլ պէտք է նէ կը յարձըկի, կենալու է նէ կը կենայ, վերջապէս իր տիրոջը կամքէն դուրս չելլեր, ու ինչուան իր կեանքը կը դնէ անոր վրայ :

Ի՞սա այսպիսի բնաւորութիւնն կ'ունենայ ան ձին որ կրթուած է, և պրզտիկութենէ սկսած է մարդուս ծառայել . ան ատեն կը սկսի կրթուիլ երբոր իր ազատութիւնը կը կորսընցընէ :

Որովհետեւ Եւրոպայի ամէն կողմերն ալ հիմա մարդաբնակ է, անոր համար հոն վայրի ձի չգտնուիր :

Իս կենդանին բնութեամբ հեղէ, ու խիստ գիւրաւ կ'ընտանենայ մարդուս հետ . ուստի ոչ երբէք տնէն կ'ել-